ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» հուլիսի 2019 թվականի Ն:98 ք.Գյումրի

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի Ն:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի Ն:1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայկ Հարությունյանի 2019 թվականի հունիսի 28-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 40 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկ Հարությունյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 15 աշխատանքային օր՝ 2019 թվականի հուլիսի 3-ից 20-ը ներառյալ:
2. Հայկ Հարությունյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 40 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Նվարդ Մկրտչյանին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է.